ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԾՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի փետրվարի 15-ին կնքված «ՇՄՆ-ԾՁԲ-22/13» ծածկագրով պայմանագրում 2022 թվականի ապրիլի 11-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Պայմանագրի հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագրի գնացուցակը խմբագրվել է,
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագրի հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագրի գնացուցակը, լրացվել է նոր բովանդակությամբ՝ նոր 25-27-րդ կետերով,
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 7.5 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Զ.Պապյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-529:**

Էլ. փոստ՝ **gnumner@env.am, gnumner.mnp@yandex.ru**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«15» փետրվարի 2022թ. N ՇՄՆ-ԾՁԲ-22/13 պայմանագրի

ք.Երևան «14» «04» 2022թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Գզրարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2022 թվականի փետրվարի 15-ին կնքված «ՇՄՆ-ԾՁԲ-22/13» ծածկագրով պայմանագրի 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2022 թվականի փետրվարի 15-ին կնքված «ՇՄՆ-ԾՁԲ-22/13» ծածկագրով պայմանագրի հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագրի գնացուցակը, լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 25-27-րդ կետերով՝

«

25.	Ընդհանուր տեխնիկական զննություն	Ըստ անհրաժեշտության	5 000
26.	Անվադողի փոխարինում, ներառյալ հավասարակշռումը՝ 1 հատ	Ըստ անհրաժեշտության	3 000
27.	Անվադողի հավասարակշռում՝ 1 հատ	Ըստ անհրաժեշտության	2 500

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Տոյոտա Երևան» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Բայրոնի 3
ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 16062005562600
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 01557589
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի տնօրեն
Գ.Գուլյան	**Վ.Գզրարյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**